# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*20-ը սեպտեմբերի 2022թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 17*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 129 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 20.09.2022թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 17* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Ա. Բաղդասարյանը և Բ. Հարությունյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն

## *ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

## ՕՐԱԿԱՐԳ

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/*

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2023 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Կարբի համայնքի զարգացման հիմնադրամին գումար հատկացնելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

5. Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման հաշվեկշիռները հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

6. Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքն ընդունելու և դուրսգրման ենթակա գույքի կազմը հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

7. <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը Արուճ գյուղի վարչական ղեկավարի նստավայրից անհատույց օգտագործման համար տարածք տրամադրելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 10.06.2022թ. N 85-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

10. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

    */Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

11. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

    */Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

    */Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

13. Աշտարակ համայնքի Ոսկեվազ գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:

    */Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

14. Աշտարակ համայնքի Փարպի գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:

    */Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

15. Աշտարակ համայնքի Ուջան գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

16. Աշտարակ համայնքի Աղձք, Արուճ, Սաղմոսավան, Օհանավան և Արտաշավան բնակավայրերում այգեգործական թաղամասերի և Օշական բնակավայրում փակուղու համարակալման մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

17. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

18. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

19. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

20. Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

21. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքները Հյուսիս-Հարավ ներդրումային ծրագիր-ծրագիր 2-ի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

22. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*20-ը սեպտեմբերի 2022թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 17*

*\/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 130 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի և 31 բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի «Կոմիտասի» անվան զբոսայգու հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Արագածոտն և Օրգով բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 2 «Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 3 «Հովիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 1 «Մանուշակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Ավան, Բյուրական, Լեռնարոտ, Ոսկեվազ, Վերին Սասունիկ և Ուջան բնակավայրերի ճանապարհների և փողոցների հիմնանորոգում տուֆ քարով սալապատումով», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի շախմատի ակադեմիայի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Նոր Ամանոս և Ուջան բնակավայրերի ոռոգման ներտնտեսային ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արտաշավան, Արուճ, Բազմաղբյուր, Բյուրական, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Եդեսիա, Նոր Երզնկա, Սասունիկ, Տեղեր, Ուջան, Փարպի և Օրգով բնակավայրերի խմելու ջրի ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Բյուրական, Կարբի և Ոսկեհատ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման, կառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների

իրականացում», «Աշտարակ համայնքի կարիքների համար՝ թվով 11 միկրոավտոբուսների ձեռքբերում», «Աշտարակ համայնքի կարիքների համար՝ հատուկ բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում», «Աշտարակ համայնքում թվով՝ 35 ավտոկանգառների կառուցում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի ամառային կինոթատրոնի շենքի վերակառուցապատման, հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Բազմաղբյուր, Բյուրական և Սասունիկ բնակավայրում մարզադաշտերի կառուցում, հիմնանորոգում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի բնակավայրում՝ Արուճի բժշկական ամբուլատորիայի, Կարբիի բժշկական ամբուլատորիայի, Փարպիի բժշկական ամբուլատորիայի և Արագածոտն վարչական, Ուջանի վարչական շենքերի հիմնանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում» և «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի մշակույթի տան շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում» (այսուհետ՝ ծրագրեր) թվով՝ 18 սուբվենցիայի հայտերին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել որ՝

1) Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը:

2) Ծրագրի ներկայացման համար համայնքի 2023 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագրերը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

3) Ծրագրերի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 17* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Բ. Հարությունյանը և Ա. Զաքարյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*20.09.2022թ. N 130-Ա որոշմամբ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու ծրագրային հայտեր՝

1) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի և 31 բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների իրականացում»,

2) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի «Կոմիտասի» անվան զբոսայգու հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում»,

3) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Արագածոտն և Օրգով բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների իրականացում»,

4) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 2 «Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

5) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 3 «Հովիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

6) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 1 «Մանուշակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

7) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Ավան, Բյուրական, Լեռնարոտ, Ոսկեվազ, Վերին Սասունիկ և Ուջան բնակավայրերի ճանապարհների և փողոցների հիմնանորոգում տուֆ քարով սալապատումով»,

8) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի շախմատի ակադեմիայի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

9) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Նոր Ամանոս և Ուջան բնակավայրերի ոռոգման ներտնտեսային ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում»,

10) «Աշտարակ համայնքի Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արտաշավան, Արուճ, Բազմաղբյուր, Բյուրական, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Եդեսիա, Նոր Երզնկա, Սասունիկ, Տեղեր, Ուջան, Փարպի և Օրգով բնակավայրերի խմելու ջրի ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում»,

11) «Աշտարակ համայնքի Բյուրական, Կարբի և Ոսկեհատ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման, կառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

12) «Աշտարակ համայնքի կարիքների համար՝ թվով 11 միկրոավտոբուսների ձեռքբերում»,

13) «Աշտարակ համայնքի կարիքների համար՝ հատուկ բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում»,

14) «Աշտարակ համայնքում թվով՝ 35 ավտոկանգառների կառուցում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

15) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի ամառային կինոթատրոնի շենքի վերակառուցապատման, հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

16) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Բազմաղբյուր, Բյուրական և Սասունիկ բնակավայրում մարզադաշտերի կառուցում, հիմնանորոգում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

17) «Աշտարակ համայնքի բնակավայրում՝ Արուճի բժշկական ամբուլատորիայի, Կարբիի բժշկական ամբուլատորիայի, Փարպիի բժշկական ամբուլատորիայի և Արագածոտն վարչական, Ուջանի վարչական շենքերի հիմնանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»

18) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի մշակույթի տան շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*20-ը սեպտեմբերի 2022թ.*

## ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 17*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 131 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Կարբի համայնքի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Շահբազյանի գրությունը /մուտք՝ 12.08.2022թ. թիվ 2109/, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի Կարբի գյուղի Այ - Թի դպրոց ուսումնական կենտրոնի շենքի վերանորոգման աշխատանքներն իրականացրած կազմակերպությանը վճարելու նպատակով Կարբի համայնքի զարգացման հիմնադրամին հատկացնել 3 100 000 /երեք միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ASHTARAK MUNICIPALITY • ARAGATSOTN REGION • 05028579

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*20-ը սեպտեմբերի 2022թ.*

## <<ԱՇՏԱՐԱԿԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 17*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***N 132 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34, 37 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1.Հաստատել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

2.Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 10-Ա որոշման հավելված 1-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*20.09.2022թ. N 132-Ա որոշմամբ*

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## «ԱՇՏԱՐԱԿԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը (այսուհետ՝ հիմնարկ) Աշտարակի համայնքապետարանի կազմում գործող՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային բյուջետային կազմակերպություն է:

2. Հիմնարկի հիմնադիրն Աշտարակ համայնքն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու (այսուհետ՝ հիմնադիր):

3. Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և հիմնարկի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Հիմնարկի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ.

2) ռուսերեն լրիվ՝ Общинное учреждение «Вывоз мусора и санитарная очистка Аштарака» .

3) անգլերեն լրիվ՝ Community Agency «Waste removal and sanitary cleaning of Ashtarak».

4) հայերեն կրճատ՝ «ԱԱՍՄ» ՀՀ.

5) ռուսերեն կրճատ՝ ОУ «ВМСОА».

6) անգլերեն կրճատ՝ CA «WRSCA»:

6. Հիմնարկի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Ն. Աշտարակեցու հր.7:

## II. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

7. Հիմնարկի գործունեության հիմնական նպատակն Աշտարակ համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ՝ ձմեռային ամիսներին) աշխատանքների իրականացման ապահովումն է:

8. Հիմնարկի հիմնական խնդիրներն են՝

1) աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ՝ ձմեռային ամիսներին) աշխատանքների պարտադիր և պարբերաբար իրականացումը.

2) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.

3) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը. աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը.

4) բնակչությունից և իրավաբանական անձանցից աղբահանության վարձավճարների գանձման աշխատանքների ապահովումը.

## III. ՀԻՄՆԱՐԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

9. Հիմնարկի իրավունակությունը ծագում է նրա կանոնադրության հաստատման մասին հիմնադրի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

10. Հիմնարկի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

11. Հիմնարկն իր հիմնադրի անունից, սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակին համապատասխան, կարող է ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված քաղաքացիական պարտականություններ:

12. Հիմնարկին պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրա պաշտպանության իրավունքը, հիմնարկն իրականացնում է հիմնադրի հայեցողությամբ՝ նրա անունից:

13. Հիմնարկն ունի անվանում, հիմնադրի կողմից իրեն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված, ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք: Հիմնարկն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով:

14. Հիմնարկն օրենքի սահմաններում՝ սույն կանոնադրությամբ նախատեսված ոլորտների ևխնդիրների իրականացման համար հիմնադրի անունից իրավունք ունի՝

1) ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ,կրելու պարտականություններ.

2) դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ:

15. Հիմնարկի իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով

նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, ինչպես նաև՝ հիմնադրի որոշմամբ:

16. Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն կրում հիմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով:

17. Հիմնարկը պարտավոր է՝

1) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական և ֆինանսական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ.

2) ապահովել կազմակերպության փաստաթղթերի (կազմակերպության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթեր, կազմակերպության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական և ֆինանսական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների նիստերի արձանագրություններ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր) պահպանումը:

## IV. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Հիմնարկի կառավարումն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը (այսուհետ՝ լիազոր մարմին): Լիազոր մարմնին է պատկանում հիմնարկի կառավարման և գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

19. Հիմնարկի հիմնադրի լիազորություններն են՝

1) հիմնարկի կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը.

2) հիմնարկի գործունեության դադարման մասին որոշման ընդունումը.

3) հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը.

20. Լիազոր մարմինը՝

1) հաստատում է հիմնարկի պահպանման ծախսերի տարեկան նախահաշիվը,

2) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հիմնարկի տնօրենին.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ.

21. Հիմնարկի տնօրենը՝

1) գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, հիմնադրի, լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարականների համաձայն.

2) հաշվետու է հիմնադրին և լիազոր մարմնին.

3) պատասխանատու է հիմնարկի գործունեության համար.

4) չի կարող զբաղեցնել այլ վճարովի պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

5) լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Աշտարակ համայնքին պատճառած վնասի համար: Հիմնարկի տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տնօրինում է հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), գործարքներ է կնքում հիմնադրի անունից.

7) ներկայացնում է հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

8) գործում է առանց լիազորագրի.

9) տալիս է հիմնարկի անունից հանդես գալու լիազորագրեր.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).

11) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը.

12) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնարկի աշխատողներին.

13) հիմնարկի աշխատողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

14) արձակում է աշխատանքային իրավահարաբերություններից բխող հրամաններ հիմնարկի աշխատողներին արձակուրդ տրամադրելու (հետ կանչելու), նրանց գործուղումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում իր գործուղումների վերաբերյալ.

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

## V. ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

22.Հիմնարկն իրավունք ունի օրենքին, հիմնադրի և լիազոր մարմնի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

23.Հիմնարկի սեփականությունը ձևավորվում է հիմնարկի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հիմնարկի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից: Հիմնարկի գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

24.Հիմնադրի որոշմամբ հիմնարկին անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:

25.Հիմնարկը կարող է օտարել գույք իր հայեցողությամբ /հիմնադրի կամ լիազոր մարմնի հայեցողությամբ/՝պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

26.Հիմնարկի գույքային իրավունքների օբյեկտներն են՝

1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.

2) աշխատանքները և ծառայությունները.

3) տեղեկատվությունը.

4) ոչ նյութական բարիքները:

27. Հիմնարկի տիրապետմանն ու օգտագործմանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան

չեն կարող պատկանել հիմնարկին:

28. Հիմնարկի գույքը գտնվում է Աշտարակ համայնքի պաշտպանության ներքո:

## VI. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

29. Հիմնարկի գործունեությունը կարող է դադարել միայն հիմնադրի որոշմամբ:

30. Հիմնարկի հիմնադիրը կազմակերպության գործունեության դադարման մասին որոշմամբ նաև նշանակում է լուծարային հանձնաժողով, սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Հիմնարկի լուծարման ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսվանից:

31. Հիմնարկի գործունեությունը համարվում է դադարած՝ հիմնադրի սահմանած օրվանից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*20-ը սեպտեմբերի 2022թ.*

## ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 17*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***N 133 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ավագանու 11.04.2022թ. N 47-Ա և 27.07.2022թ. N 119-Ա որոշումները, պարտատերերի հետհաշվարկներն ավարտելու հանգամանքը և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների կողմից կազմված լուծարման հաշվեկշիռները, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել՝

- <<Աշտարակի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ի լուծարման հաշվեկշիռը,

- <<Կարբի համայնքի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ի լուծարման հաշվեկշիռը,

համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_ _ «__» 2022 թ

իրավասու մարմնի  թիվ __ որոշմամբ

Լուծարող ________________

(ստորագրություն)  (անուն)  (ազգանուն)

# ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Առ __ . .2022թ__

(ամսաթիվ, ամիս, տարի)

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը _<br><<Աշտարակի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները<br>__________Աղբահանություն __________________________________<br>______________________________________________________________________ | R |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | 56.215.747005 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | 05019038 |
| Չափի միավորը | 1 |
| Գտնվելու վայրը ___Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Ներսես Աշտարակեցու hր. 7 _<br>հեռախոսը՝ | 0232 3-10-26 |
| Փաստացի գործունեության<br>իրականացման վայրը Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Ներսես Աշտարակեցու hր. 7<br>հեռախոսը՝ | 0232 3-10-26 |

| | ԱԿՏԻՎ | ԼՈՒԾԱՐՄԱՆ ՊԱՀԻՆ |
|---|---|---|
| | I. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ | |
| 1. | Հիմնական միջոցներ | 0 |
| 2. | Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ | 0 |
| 3. | Ոչ նյութական ակտիվներ | 0 |
| 4. | Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 0 |
| 5. | Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 0 |
| 6. | Հետաձգված հարկային ակտիվներ | 0 |
| 7. | Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 0 |
| 8. | | |
| 9. | Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 0 |
| | | |
| | II. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ | |
| 10. | Նյութեր | 0 |
| 11. | Աճեցվող և բտվող կենդանիներ | 0 |
| 12. | Արագամաշ առարկաներ | 0 |
| 13. | Անավարտ արտադրություն | 0 |
| 14. | Արտադրանք | 0 |
| 15. | Ապրանքներ | 0 |
| 16. | Տրված ընթացիկ կանխավճարներ | 0 |
| 17. | Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 0 |
| 18. | Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 0 |
| 19. | Այլ դեբիտորական պարտքեր | 0 |
| 20. | Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 0 |
| 21. | Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 0 |
| 22. | Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 0 |
| 23. | | |
| 24. | Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 0 |
| | | |
| | ՊԱՍԻՎ | |
| 25. | III. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | |
| 26. | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 0 |
| 27. | Էմիսիոն եկամուտ | 0 |
| 28. | Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 0 |
| 29. | Կուտակված շահույթ | 0 |
| 30. | Պահուստային կապիտալ | 0 |

| | | |
|---|---|---|
| 31. | Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | **0** |
| 32. | | **0** |
| 33. | Ընդամենը սեփական կապիտալ | **0** |
| | **IV. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | |
| 34. | Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 0 |
| 35. | Հետաձգված հարկային պարտավորություններ | 0 |
| 36. | Ակտիվներին վերաբերող շնորհներ | 0 |
| 37. | Ոչ ընթացիկ պահուստներ | 0 |
| 38. | Այլ ոչ ընթացիկ պարտավորոյուններ, այդ թվում՝ | 0 |
| 39. | | |
| 40. | Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 0 |
| | **V. ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | |
| 41. | Կարճաժամկետ բանկային վարկեր | 0 |
| 42. | Կարճաժամկետ փոխառություններ | 0 |
| 43. | Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 0 |
| 44. | Ստացված ընթացիկ կանխավճարներ | 0 |
| 45. | Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 0 |
| 46. | Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 0 |
| 47. | Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 0 |
| 48. | Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 0 |
| 49. | Այլ կրեդիտորական պարտքեր | 0 |
| 50. | Եկամուտներին վերաբերող շնորհներ | 0 |
| 51. | Ընթացիկ պահուստներ | 0 |
| 52. | Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 0 |
| 53. | Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 0 |
| 56. | **ՀԱՇՎԵԿՇԻՌ** | 0 |

Լուծարման հանձնաժողովի նախագահ Սամվել Սահակյան

Հանձնաժողովի անդամներ Էդգար Մելիքյան

Անուշ Արամյան

Քրիստինա Մեսրոբյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«_______________________» ________-ի

իրավասու մարմնի «____» ________ 201___թ.

թիվ _____ որոշմամբ

Լուծարող _____________________ _____________ _________________

(ստորագրություն) (անուն) (ազգանուն)

# ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Առ ______12.09.2022թ.________________

(ամսաթիվ, ամիս, տարի)

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը <<Կարբի Համայնքի Կոմունալ Ծառայություն>>ՀՈԱԿ | |
